



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
20 հունիսի 2018 թվականի N 127-Ա

«Ա.ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՂԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով «Ա.Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Գրիգորյանի դիմումը՝

### Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ.

1. 2018թ. հունիսի 21-ից «Ա.Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սլավիկ Գրիգորյանին ազատել տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից համաձայն իր դիմումի:
2. 2018թ. հունիսի 21-ից «Ա.Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները վերապահել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արմենուհի Օհանջանյանին:
3. Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հայկ Հարությունյան	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Արփինե Դավթյան	Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
Նարինե Աթայան	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ:
4. Հանձնաժողովին՝	հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել ետոյա ժամկետի ընթացքում պարտավորությունները ներկայացնել քննարկման:

20.06.2018



X *[Signature]*